



(4)

43982-6-6

1999.

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍՏՈՂԱԿԱՆ

ՄԻ ՈՒԹԵԱՆ

2220.

1897/98, 1898/99 թ. թ.

Ltn  
564

ՎՐԵՄՆԱ 1899  
ՄԽԱԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ



28.05.1962

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

“Քնի աստեղօք ինչ կայ սփուն,  
քան զանձկակ եղայր անոն”:  
Պէտմիթաշնամ:

Այն օրից, երբ արագաքայլ առաջադիմոն քաղաքակրթութիւնը իւր կենացունչ ճառագայթները ծագելով հայի վրայ, ցողեց նորա միտքը լուսաւորութեան գաղափարով, երբ կուլտուրայի տուած բարիքների ճաշակը արթնացաւ նորանում, այն օրից քաղաքակրթ Եւրոպայի քարծրագոյն դպրոցների դուները բաղկնել սկսաւ, որ եւ սիրալիք ընդունելութիւն գտաւ հայ երիտասարդ ուսանող, մի սերունդ, որը օրէցօր աճելու վրայ է: Այժմ, դեռևս հաշուի չառած Ռուսաստանի քարձրագոյն դպրոցների մէջ ուսանող քազմաթիւ հայ երիտասարդները, Եւրոպայի զանազան վայրերում՝ որ կարելի է գիտութեան պաշար ձեռք բերել, ոչ նուազ պատկառելի թուով ուսանողներ կան, որոնք կոչուած են ապագայում մեր նորավիթիթ հասարակական զրական ասպարիզում գործչի եւ առաջնորդողի դեր կատարելու, լուսաւորութեան դամակար հանդիսանալով:

Արդ, շատ բնական էր որ այսպէս զանազան վայրերում ցրուած հայ ուսանողները պահանջ զգացին ճանաչել իրար, անձնական եւ ընկերական մտերիմ յարաբերութիւններ եւ ծանօթութիւններ ստեղծել, դեռեւս ուսանողական նստարանների վրայից բարեկանական ձեռք մեկնել իրար, բանաստեղծի հետ “եղբայր ենք մենք, գոչելով, համերաշխութեան ոզին զարգացնել, այս, շատ բնական էր, որ հայ ուսանողը քարծրանալով իւր անհատականից, եսականից, ջանար հասարակական առարինութիւններով օժտուելու եւ իւր ընկերների հետ միանալով ձգտէր դէպ ի ընդհանուր իդէալները: Պահանջը նախազգծել էր ուղին, մոտմ՝ Էր նախաձեռնող ոզին, եւ ահա “Լայպցիգի հայմնարանական ֆնկերութիւնը,, իւր ժողովներում քանից յուզած լինելով այդ հարցը, վերջապէս սորանից մօտ 3 տարի առաջ նախակներով դիմելով մի քանի ուսանողաշատ քաղաքների ուսանողութիւններին, վերջիններիս հաւանութեամբը եւ

առաջարկութեամբ ստանձնեց գործը եւ իւր միջից ընտրեց մի յանձնաժողով 4 հոգուց քաղկացած, որոնց վերայ պարտաւորութիւն դրուեց հրամիրել մի ընդհանուր ուսանողական համագումար եւ ներկայացնել կանոնադրութեան մի նախագիծ հիմնելու համար մի միութիւն, որի նպատակը ամփոփուում՝ էր վերոշեալ պահանջների մէջ:

Յանձնաժողովը իւր պարտաւորութիւնը կատարելիս՝ ամենուրէ օժանդակութեան եւ համակրութեան հանդիպեց եւ 1897ի ապրիլին Հայդելբերգում՝ կայացաւ առաջին համագումարը, որը ընտելով յանձնաժողովի ներկայացրած կանոնադրութեան նախագիծը ու մի քանի փոփոխութիւններից յետոյ հիմնուեց “Միութիւն”, որը զուտ ուսանողական բնաւորութիւն ունի, ըստ ամենայնի մի խակական ուսանողին նպատակայարմար եւ թոյլատրելի սահմանների մէջ է ամփոփուած եւ որեւէ քաղաքական միտք հեռու է իւր նպատակից:

“Միութիւնն, հիմնելու օրից մինչեւ այժմ, համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում՝ ստացած արդիւնքները մի առաւատչեայ են, որ նախաձեռնողները մի խիստ ցանկալի գործ են կատարել, սիալուել չեն իրենց ընդգծած ուղին մտնելով եւ կարող են իրենց ջանքերը պատկուած տեսնել:

Պատիւ իրենց եւ խրախոյս մեզ:

Եւրոպայի հայ ուսանողական առաջին համագումարի արձանագրութիւններից քաղուածք:

Հայութեաբերէ, Ապրիլի 12ից—15ը 1897 թ.:

Առաջին նիստը կայացաւ ներկայութեամբ 22 ուսանողների Ապրիլի 12ին: Գասախօսութեան նիւթն էր “Ազգայնութեան մասին ընդհանրապէս եւ աղքայնութիւնը մեր մէջ մասնաւորապէսու, իսկ գասախօսը պին. Տ. Հետաքրթիր թեման դիսկուսիանների երկար առիթ տուեց:

Կոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ երկրորդ նիստը ներկայութեամբ 24 ուս. որ նուիրուած էր ամբողջովին կանոնադրութեան քննութեանը: Կախ հարց յարուցուեց թէ ներկայ պ. պ. իրեւ ներկայացուցիչներ վայելում նև հարցերի որոշումներում իրենց ընկերութեան անդամների ձայնը թէ ոչ: Երկար ու տաք վիճաբանութիւններից յետոյ վճռուեց 13ով ընդգէմ 11ի քննել հարցերը իրեւ մասնաւոր անձնաւորութիւններ: Արանից յետոյ դիմեցին համագումարի անունը հաստատելուն որը վճռական լուծում չստացաւ:

Երրորդ նիստը բացուեց ապրիլի 13ին առաւօտեան  $8\frac{1}{4}$  ժամին ներկայութեամբ 24 ուս.: Կախ կարգացուեցաւ արձանագրութիւնը, որը տեղիք տուաւ փոքր վիճաբանութեան եւ որոշուեց արձանագրել հիմնական կէտերը եւ վճռուները — 16ով ընդգէմ 8ի —: Հապա ձայնը անցաւ պ. վ. ին որը խօսաց “Հայերէնի նուագայնութեան եւ կոկութեան մասին”: Գասախօսութիւնը, ժամանակի սուզութեան պատճառով, գասախօսը ստիպուած էր ընդհանրել եւ որոշուեց մի այլ ժամանակ շարունակել դիսկուսիանների համար, իսկ ժողովը դիմեց կանոնադրութեան սկզբունքների քննութեանը:

2որրորդ ժողովը տեղի ունեցաւ նոյն օրը երեկոյեան  $5\frac{1}{2}$  ին, ներկայ էին բոլոր անդամները: Պար, Պ. գասախօսեց “Գյութեան կոիւը եւ բարյականութիւնն, գասախօսութիւնը տեղիք տուաւ հետաքրթիր ու տաք վիճաբանութեան, որին մասնակցեցին բաւական թուով պարուներ:

Հինգերորդ նիստը կայացաւ ապրիլի 14ի առաւօտեան: Կախ տեղի ունեցաւ գիտական մասը “Հասարակական պատասխանատուութիւնը անհատական հիւանդութիւնների դէպքում” որ կարգում էր

պ. Մ.: Վիճաբանութիւններից եւ կարճ ընդհատումից յետոյ ժողովը դիմեց կանոնադրութեան քննութեանը: Վիճաբանութեան գլխաւոր կէտերն էին թէ արդեօք մեր միութեան պիտի՞նայել իբրեւ “ընկերութիւնների միութեան, թէ անհատների, եւ թէ ի՞նչն է ընկերութեան խսկան նպատակը: Յայտնուեցան բաւական տարբեր կարծիքներ թէ մէկի եւ թէ միւսի մասին, բայց ոչ մէկը դոցանից հաստատուած ձեւակերպութիւն չստացաւ:

Վեցերորդ նիստը երեկոյեան շարունակութիւն էր հինգերորդի: Զեւակերպութիւնները երկու էին եւ երկար վիճաբանութիւններից ու քուէարկութիւնից յետոյ յայտնուեց որ երկուսն էլ հաւասար ձայների քանակութեամբ են ցանկացում: Նորից վիճաբանութիւնները ցցց տուին որ գործը դորանում էլ կանգ կառնի եթէ մի որեւէ կողմը փոքր զիջում չանէ — որը եւ տեղի ունեցաւ եւ 16ով ընդդէմ 12ի հաստատուեցաւ հետեւեալ ձեւակերպութիւնը նպատակների III կէտի համար — (որը եւ գլխաւոր նիւթն էր վիճաբանութիւնների) “կազմել իդէալներ մեր հայրենի հողել վերայ գործելու համար”:

I արտակարդ ժողով կայացաւ ապրիլի 14ին երեկոյեան  $10\frac{1}{2}$  ժամին որով պէտք է քիչ օգնութիւն հասցնուէր կանոնադրութեան քննութեան հարցին: Նախ հարց եղաւ փոխել միութեան ծրագրի անունը, բայց փոքր վիճաբանութիւններից յետոյ որոշուեց թողնել լայպցիդի նախագծում դրուած “Եւրոպայի հայ ուսանողների միութեան” անունը: Այնուհետեւ ժողովը զբարձր կազմակերպութիւնը գլխի քննութեամբը, որը առիթ տուաւ եւ թերթ ունենալու հարցին:

Ութերորդ նիստը կայացաւ ապրիլի 15ին առաւտօտեան  $9\frac{1}{2}$  ժամին 14 հոգու ներկայութեամբ: Պ. Ն. յայտնեց որ ժամանակի սղութեան պատճառով ստիպուած է դասախոսութիւնը չկարդալ: Հապա սկսուեց կանոնադրութեան քննութիւնը:

#### Առաջարկուեցն:

1. Ընդհանուր ժողովներ տարեկան մի կամ երկու անդամ:
2. Կարգադիր մասնաժողով մի ժողովից մինչեւ հետեւեալ:
3. Պարբերական շրջաբերականներ:

Այս երեք կէտը նշյագէս եւ այն “համարել ուսանող ամէն մէկին որը ուսանելու նպատակով է եկած, բայց անունը ուսանողական (համալսարանի) տետրակումը չկայ, ընդունուեց միաձայն: Նորից անգամներից 2ը հարց յարուցին խօսալ նպատակի մասին: Ժողովը յարգեց խնդիրքը: Այս պարոնները առաջարկեցին “միմիայն” բառի տեղ՝ “ըստ կարելցն, ը գնել, որին առաջարկ ձեւակերպողը զիջանեց եւ այգափիսով նպատակը ստացաւ նշյն ձեւը որին տուել էր լայպցիդի մասնաժողովը:

Առաջարկուեց կրկին անդամ վերաբուէարկել նպատակը, որը եւ ձայների մեծամասնութեամբ ընդունուեցաւ:

Վիճաբանութիւններից եւ վերաբուէարկութիւններից յետոյ նպատակի հետեւեալ ձեւակերպութիւնը ընդունուեց իբրեւ հաստատուած:

1. Բարոյական եւ մտաւոր շփում առաջացնել հայ ուսանողական խմբերի եւ ուսանողների մէջ:

2. Անձնական ծանօթութիւն մէկվեկու հետ:

3. Ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողական մէջ:

Չայների մեծամասնութեամբ ընդունուեցան հետեւեալ վճիռները:

1. Ընդհանուր ժողովների վճիռները միայն այն գէպքումն են կանոնադր, երբ ընդունուած են ժողովն եկած անդամների մեծամասնութեամբ:

2. Միութեան մասնակցող ուսանողական խմբերը ընդհանուր ժողովի որոշումների նկատմամբ պահպանում են լիովին աղատութիւն:

3. 6 կէտում ընդունուեց Պարիզի ծրագրի այն մասը որը վերաբերուում էր միութեան հաշւետուութեան խնդիրներում (12 ձայն):

4. Յաջորդ կարգադրիչ մասնաժողովի ընտրութիւնը ժողովեց առանց փոփոխութեան:

5. Միութեան բոլոր անդամները պիտի հոգան կարգադրի մասնաժողովի եւ ընդհանուր ժողովի ծախքերը:

6. Միութեան մասնակցող ուսանողական խմբերը ունենալու են ամէնաքիչը մի մի ներկայացուցիչներ ընդհանուր ժողովում:

7. Գործնական ձեռնարկների վերաբերեալ առաջարկները կարգադրիչ մասնաժողովը յայտնում է նախօք, բոլոր ուսանողութեան եւ ուսանողական խմբերի ներկայացուցիչները բերում են իրենց հետ ընդհանուր ժողովին թեր եւ գէմ կարծիքների թիւը, իսկ առանձին ուսանողներ որոնք ոչ մի խմբի չեն պատկանում ուղարկում են գրաւոր իրենց կարծիքները եւ ձայները (ընդունուած 15 ձ.):

8. Պարիզիցների առաջարկը — 13 կէտ — թէ խորհրդակից անդամները մասնակցում են ընդհանուր ժողովին իբրեւ հիւրեր, առանց ձայնի իրաւունքի՝ ընդունուեց 15 ձայնով:

9. Կարգադրիչ մասնաժողովի համար ուսանողներից որոշուած մի ուսանողական խումբը ընտրումէ իւր կողմից յանձնաժողովը: 2րդ եւ 4րդ պրակ ընդունուեցան անփոխիս իսկ 3րդը քիչ փոփոխուած:

10. Պարբերական շրջաբերականներ լոյս են տեսնելու տարեկան անդամ (15 ձայն.):

11. Անդամավճարն է կազմում առնուազը 80 պֆ. կամ մի փրանկ:

Հայների մեծամասնութեամբ որոշուեց, որ մեր ներկայ կանոնաշրութեան կէտերը կարող են փոփոխուել յաջորդ ընդհանուր ժողովներումը միայն ձայների  $\frac{3}{4}$  մեծամասնութեամբ:

Յաջորդ ընդհանուր ժողովի համար ընտրուեց կարգադրիչ մասնաժողով՝ Պարիզի ուսանողութիւնը, իսկ Պարիզեցոց հրաժարուելու դէպքում Լօգանինը, հակառակ դէպքում Բեռլինի կամ Լայպցիգի ուսանողութիւնները:

Երկրորդ կարգադրիչ յանձնաժողովի հաշուէտութիւնը:

Թէպէտ 1 համագումարում ընտրուած էր Պարիզի ուսանողութիւնը իւր միջից կարգադրիչ յանձնաժողովի անդամներ նշանակելու, սակայն նցն տեղի ուսանողական ընկերութեան ներքին անհամաձայնութիւնների պատճառով միջոց չունեցաւ այդ գործը ստանձնել: Գորափոխարէն Բեռլինի ուսանողութիւնը նախօրք Պարիզի եւ միւս տեղերի ուսանողութիւններից հաւանութիւն ստանալով 1898 թուի ամսրային կիսամեակում ընտրեց մի յանձնաժողով չորս հոգուց բաղկացած, բայց կիսամեակն իւր վախճանին մօտեցած լինելու պատճառով, անհնար էր այլւա համագումարը գլուխ բերել, իսկ 1898—1899 ձմռային կիսամեակին կարգադրիչ յանձնաժողովի անդամներից 2ը հետացած լինելով Բեռլինից, ուսանողութիւնը ընտրեց ուրիշ 3 անդամ եւս: Կարգադրիչ յանձնաժողովը կարողացաւ Եւրոպայի հայ ուսանողների վերաբերեալ մի ստատիստիկա կաղմէլ, Թէպէտ թերի, մի քանի քաղաքներից բաւարար տեղեկութիւններ ստացած չլինելու պատճառով: Համագումարի տեղը եւ ժամանակը որոշելու համար յանձնաժողովը կանխաւ դիմեց բոլոր ուսանողներին եւ ի վերջո նշանակեց Հայդելբերգ, իբրեւ բոլոր մասնակցողների համար մի կենդրոն տեղ եւ ժամանակը մարտ 27ից—31ը: Դասախոսութիւնները սակաւ չլինելու համար, բաց ի ընդհանուր դիմումներից, մի քանի ուսանողներին առանձնապէս դիմելու արժան դատուեց եւ եօթն դոցանից դասախոսելու խոստումն տուին, բայց 4ը զանազան արգելառիթներից դրդուած՝ նախ քան համագումարի կայանալը հրաժարուեցին դասախոսելուց, բայց այլւա յանձնաժողովը միջոց չունեցաւ ուրիշ դասախոսութիւններով փոխարինել գորա:

Լեմբերգի լեհական-հայ ուսանողներին եւս հրաւեր ուղարկուեցաւ համագումարի մասնակցելու, սակայն նքան չկարողացան անձամբ ներկայ լինել, այլ միայն մի գրութեամբ իրենց պատրաստականութիւնը յայտնեցին “միութեան” անդամակցելու, խոստանալով միւս համագումարին անպատճառ ներկայ լինել: Կարգ. յանձնաժողով հաւաքել է 17 մ. 20 պի:

Եւրոպայի հայ ուսանողական երկրորդ համագումարի արձանագրութիւններից քաղուածք:

Հայութէտէ, Մարտի 27ից—31ը 1899թ:

Մարտի 26ի երեկոյեան՝ կարգադրիչ յանձնաժողովի կազմած օրակարգով տեղի ունեցաւ անդամների ողջունումն եւ յաջորդ օրը սկսուեցին պարապմունքները ներկայութեամբ 15 ուս.:

Առաջք նիստին — մարտի 27 — կայացաւ պաշտօնակատար անձանց ընտրութիւնը բոլոր ժողովների համար մի նախագահ, մի փոխնախագահ եւ երեք քարտուղարներ:

Կարգադրիչ յանձնաժողովի նախագահը զեկուցումն տուեց յանձնաժողովի գործունելութեան մասին եւ ներկայացրեց հաշիւ:

Լեմբերգի լեհական-հայ ուսանողները, որոնց հրաւեր էր ուղարկուած յանձնաժողովի կողմից, համակրութեամբ իրենց ձեռքն էին մեկնում՝ միութեանս, եւ ուղարկել էին մի գրութիւն, որը համագումարում կարգացուեց եւ վճռուեց պատասխանել:

Երկրորդ նիստում Պր. Վ. Ն. — Լայպցիգից — կարգաց մի գասախօսութիւն ու պատմական ուղղութիւնները նոր ժամանակներում եւ մի համառօտ տեսութիւն հայկական պատմագրութեան մասին, երկար վիճաբանութիւն հետեւեց գասախօսութեան:

Երրորդ նիստը նուիրուած էր Լայպցիգի ուսանողութեան գրած առաջարկի քննութեան, միութեան օրգան ունենալու վերաբերեալ, որն երկար խօսակցութեան առիթ տուեց եւ ի վերջո ընտրուեց մի յանձնախումբ այս առաջարկը մշակելու եւ իւր եղանակացութիւնները համագումարին ներկայացնելու:

Չորրորդ նիստում գասախօսութիւն կարգաց Պր. Մ. Յ. Հայ համալսարանականի կոչման մասին, որը մի շահաւէտ վիճաբանութեան նիւթ դարձաւ: Միութեան կանոնագրութեան մի քանի կէտերը փոփոխելու առաջարկները քննուեցան եւ վճռուեց միաձայն, IV. 2.ի մէջ՝ “պէտք է, բառերը փոխարինել” իրաւոնք ունի, խօսերով: Այս նիստի վերջում եւ յաջորդ նիստի սկզբում նշնպէս միաձայն վճռուեց կանոնադրութեան մէջ մոցնել իրերեւ ծանօթութիւն որ “համագումարը վերապահում է իրաւոնք՝ անհրաժեշտ դէպքում օրակարգը փոփոխութեան ենթարկել”:

Հինգերորդ նիստն ամբողջապէս նուիրուած էր կանոնադրութեան մշակմանը: “Ապատակին մէջ, իբր առանց իմաստի յիշուած, “բարյական եւ մտաւոր”, բառերը ընծերու առաջարկները մերժուեցան: Կանոնադրութեան IV. 9. փոխելու առաջարկը, ինչպէս կարգադրիչ յանձնաժողովի վերջին շրջաբերականներումը գրուած էր, ընդունելի համա-

բուեց, բայց գտնուեց թերի, ուստի ամբողջացնող ձեւակերպութիւններ տրուեցան: 14 ձայնով ընդդէմ Զի (մէկը ձեռնապահ) վճռուեց պահել շրջաբերականներում առաջարկած ձեւակերպութիւններն որ էր “գործնական ձեռնարկների վերաբերեալ վճռուները լիազօր են այն դէպքում, երբ դրա համագումարից յետոյ կարգադրիչ յանձնաժողովի կողմից միութեան բոլոր անդամների քուէին կենթարկուին եւ կստանան տուած ձայնների մեծամասնութիւնը”, ապա աւելացնել “այս ձեռնակները վերջնականապէս վճռուում եւ ի կատար են ածուում կամ համագումարի եւ կամ կարգադրիչ յանձնաժողովի միջցաւ համաձայն առաջնի յանձնարարութեանը”: VII. 1. վճռուեց միաձայն “նախապէս, խօսքի տեղ մոցնել ժամանակամիջոց “մի ամիս առաջ”, խօսքերով: Կանոնադրութիւնը, առանց բուն իմաստին դպչելու, մի քանի թեթեւ լեզուական փոփոխութիւնների ենթարկուեցաւ:

Վեցերորդ նիստում դասախոսեց Պր. Գ. Թ. — Բեռլինից — Նիւթ ունենալով “Տաճկաստանի հայ երիտասարդութեան մասին” : Դասախոսութիւնը պատճառ դարձաւ զանազան անդամներին իրենց հայեացքները լուսաբանելու եւ պաշտպանելու որով այս ժողովը նոյնպէս հետաքրքիր անցաւ:

Եօթներորդ նիստին թեթի հարցը մշակող յանձնախօսմբը յանդած եղբակացութիւնների զեկուցամը ներկայացրեց, բայց համագումարում տեղի ունեցած վիճականութիւնները ունեցան հետեւեալ արդինքը: 17 անդամներից 14 ձայնով ձեւակերպուեց այսպէս: Ինկատի ունենալով զանազան կողմերից յայտնած ցանկութիւնները այսինքն՝ հրատարակել պարբերական տեղեկութիւններ ուսանողների մասին, համագումարը պատուիրում է կարգադրիչ յանձնաժողովին, կանոնադրութեան որոշման համեմատ բաւականութիւն տալ այս պահանջն եւ հրատարակել սեմեստրը մի տետրակ: Բովանդակութիւնը կլինի տեղեկութիւններ համագումարի, ուսանողական ժողովների եւ ուսանողների մասին: Համագումարում եւ զանազան խմբերում կարգացած դասախոսութիւններից տեղեկութիւններ եւ ցանկութեան համեմատ կարձառօս կոնսպէկտաներ, հետաքրքիր տեղեկութիւններ ուսանողական աշխարհից: Թեթթվ 13 ձայնով որոշուեց անուանել “Տեղեկագիր եւր. հայ. ուս. միութեան”:

Համագումարի վերջին ուժերորդ նիստում Ժընեվի ուսանողութեան Պրն. Մ. Յ. միջոցաւ արած առաջարկն այն է “միութիւնը նախաձեռնող հանդիսանայ եւ ձեռնարկը գիտական բրոշիւններ թարգմանելուն եւ հրատարակելուն”, ժամանակի սղութեան պատճառով մանրամասն քննութեան նիւթ չկարողացաւ դառնալ եւ վճռուեց խընդրել Ժընեվի ուսանողութեան, մշակել սոյն առաջարկը եւ մի պրոդրամ

ներկայացնել կարգադրիչ յանձնաժողովին, որը դառնալու է յաջորդ համագումարի զբաղման նիւթ: Կարգադրիչ յանձնաժողովի ընտրութեան համար որոշուեց Լայպցիգի ուսանողութիւնը, իսկ սորա յանձնաշոած դէպքում բեռլինի ուսանողութիւնը:

II. համագումարին մասնակցեցան 20 ուսանողներ եւ մի ուսանողուհի:

Ուսանողութիւնների եւ ուսանողների վերաբերեալ լուրեր:

### ԲԵՌԸՆԻԿԱՆ

ԱԵՐԸՆԻ մի քանի տարուայ ընթացքում բեռլինի համալսարանում պօլիտեխնիկումում եւ գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցում բաւական մեծ թուով հայ ուսանողներ են հաւաքուած: Յաճախ փորձեր են եղած մի “հայ ճեմարանական ընկերութիւն”, հիմնելու, սակայն համալսարանի վարչութիւնից թոյլատութիւն չստանալով, մնացել են անհետեւանք: Այնու ամենայնիւ ուսանողական զրական ժողովներ տեղի են ունենում, որոնց համար առանձնապէս թոյլատութիւն ստանալու կարիք չկայ:

Սորանից 3 տարի առաջ 2—3 պարոններ 600 մարկի չափ մի գումար նուիրեցին բեռլինի հայ ուսանողութեան եւ 1897ի մարտին, մի ընդհանուր ուսանողական ժողովում վճռուեց այդ գումարով, որի վրայ աւելանում են յաճախ նորանոր նուիրատուութիւններ, հիմնեց մի “ուսանողական կասսա”, որի նպատակն է “փոխատութեամբ օգնել այն հայերին, որոնք եկել են բեռլին ուսանելու”: Ըստրում է մի գանձապահ եւ երկու օգնականներ, որոնք ամեն կիսամետակի սկզբին եւ վերջին ընդհանուր ժողով են հրաւիրում ուսանողութեանը եւ ներկայացնում են հաշիւ: Կայ նոյնպէս մշակուած կանոնադրութիւն:

ԲԵՌԸՆԻ շատ ուսանողների ցանկութիւնը — կազմել բեռլինում մի ընդհանուր ուսանողական զրական ընկերութիւն, իրականացաւ 1898 թւի գէկտեմբերին, երբ 15 ուսանողներ հաւաքուած կազմեցին մի կանոնագրութիւն, որը քննուելուց եւ վաւերացնուելուց յետոյ հիմնուեց “ԲԵՌԸՆԻ ընդհանուր հայ-ուսանողական գրական միութիւն”, որի նպատակը կազմում է “մօտ ծանօթութիւններ եւ մտաւոր շփումն առաջացնել բեռլինի հայ ուսանողների մեջ”: Կայ նպատակն իրագործելու համար կայանում են “պարբերական ժողովներ սեմեստրի ընթացքում”: Ժողովի զբաղմունքների առարկաներն են “դասախոսութիւններ եւ ուսանողներին հետաքրքրող զանազան հարցեր”:

1. “Հայոց ազգային-աշխարհիկ երգեցողութեան մասին 19րդ դարում”:

2. "Երկու խօսք ժամանակակից հայրենասիրութեան մասին:;  
 3. "Հոգեպաշտութիւնն եւ նորայ մնացրդները մեղանում:  
 4. "Այժմեան բնագիտական աշխարհայեցողութիւնը:;  
 5. "Կրօնին գիտութեան յարաբերութիւնները կամ Անիմանալին  
 (das Unerkennbare) ըստ Սպենսերի:;  
 6. "Տնտեսական գործունէութեան զարգացումը մը միջին դարերում:;  
 7. "Ընտանիքի տնտեսական եւ սոցիալական նշանակութիւնը:;  
 8. "Թոքախտը:;  
 9. "Տաճկահայ կինը:;  
 1999 թւի ամառային կիսամեակին նոյն ընկերութեան մէջ եղան  
 դասախոսութիւններ հետեւեալ նիւթերի մասին:  
 1. "Հայոց ներքին կեանքի շարժման մի քանի կողմերի մասին:;  
 2. "Գերմանական նորագոյն բանաստեղծութիւնից:;  
 3. "Գր. Նիշէ եւ նորա աշխարհայեցքը:;  
 4. "Կամքի էութիւնն եւ նորա խարուսիկ ազատութիւնը:;  
 5. "Թոքախտի եւ նորա դէմ կռւելու մասին:;  
 Ընկերութիւնն ունեցել է 1898/99 ձմեռային կիսամեակին 19 ան-  
 դամներ իսկ 1899 ամառային կիսամեակին 18 անդամներ:

Բեռլինի "Տարերեալստական ընկերութիւն":

Բեռլինի ուսանողական "մատերեալիստական ընկերութիւնը"  
 հիմնուած է 1897 թւի սցեմերի 20 ին:  
 Նպատակը՝ — ի մի գումարել մատերեալիստական աշխարհայե-  
 ցողութիւն ունեցող ուսանողներին եւ մտքերի փոխադարձ շփումով  
 պարզել այդ աշխարհայեցողութեան վերաբերող կետեր:

Միջոց՝ — ժողովներ ունենալ եւ կազ պահէլ բեռլինից հեռա-  
 ցած ընկերների հետ:

1897/8 ձմեռային սեմեսդրում անդամների թիւը համարում էր  
 17ի, կարդացուել են դասախոսութիւններ հետեւեալ նիւթերի մասին  
 1. "Մեր սպասելիքները բակտերիօլիական քիմեաից:;  
 2. "Իդեալիստական եւ մատերեալիստական աշխարհայեցողու-  
 թեան պատմութեան մասին:;  
 3. "Հասարակութիւն եւ ինտելիկենցիա:;;

4. "Ընտանիքի եւոլիցեա:;  
 5. "Վաշխառութիւնը կովկասում:;  
 6. "Կովկասի անտեսական զարգացման մասին:;  
 7. "Մարքս եւ Մարքսիզմ:;  
 8. "Ընկերութեան կասա, գրադարան եւ բեֆերատաներ:;  
 9. "Գերմանական շկոլայի ազդեցութիւնը կովկասի կեանքի վրայ: .

10. "Աշխատանք եւ Ռիթմուս" (Ritmus):  
 11. "Շերամի արդիւնաբերութիւնը կովկասում:;;  
 12. "Բնագիտութեան եւ քաղաքատնտեսութեան կապը:;  
 13. "Վերազիր արժէք եւ նորա պատմական տէրը:;  
 14. "Կապիտալիզմի լաւ եւ վատ կողմերը:;  
 15. "Վերջնական վճիռներ:;  
 16. "Քիմիան առօրեայ կեանքում:;  
 Բացի այս ժողովներից ընկերութիւնն ունեցել է 6 գործնական  
 ժողովներ:

Աւարտ 1898 թ-է:

1. "Տնտեսական մատերեալիզմ:;;  
 2. "Բնագիտութիւնն իրարև հիմք աշխարհայեցողութեան եւ  
 գործնական կեանքի:;  
 Բացի սոցանից երկու գործնական նիստեր:

Աւարտ 1898/99 թ-է:

1. "Հոգեբանութեան առաջնակարգ պրոբլեմներից մէկը — Հոգի  
 եւ մարմին:;  
 2. "Մատերեալիզմի հիմքերը:;  
 3. "Դարպինիզմ եւ սոցեալիզմ:;  
 4. "Մասնաւոր սեփիչականութեան առաջացրած հետեւանքները:;  
 5. "Մարդու ծագումը:;  
 6. "Բջիջը եւ նորա կեանքը:  
 Բացի սոցանից երկու գործնական նիստեր:

Աւարտ 1899 թ-է կ ժործնական նէստ:

1899 թւի մարտին Հայդելբերգում կայացած Եւրոպական ընդ-  
 հանուր հայ ուսանողութեան ժողովում ընտրել էին երրորդ ընդհա-  
 նուր ժողովի համար Լայպցիգի ուսանողութեան կարգադրիչ, իսկ Բեռ-  
 լինի ուսանողութեանը կանդիտատա:

Լայպցիգի ուսանողութիւնն ինչ ինչ պատճառոներով չկարողա-  
 նալով ստանձնել այդ պաշտօնը, յանձնաբարեց բեռլինի ուսանողու-  
 թեանը, որը Մայիսի 18ի ժողովով ընդունում է այդ առաջարկը եւ  
 ընդունմ է յանձնաժողովի ըորս անդամներ:

Յանձնաժողովի առաջին նիստում — յունիսի 3ին — միաձայն  
 որոշուեց դիմել եւ Հարցնել Եւրոպական բոլոր հայ ուսանողութեան,  
 ժողովների, դասախոսութիւնների եւ ուսանողութեան  
 թուի մասին: Ստացուեցան մի քանի քաղաքներից պատասխաններ ի  
 միջի այլոց Լեմբերգի Լեհական հայ ուսանողներից մի նամակ, որն ար-  
 ժանի է ուշագրութեան: Այդ նամակում լէմբերգի ուսանողներն ու-

րախութեամբ իրենց ցանկութիւնն են յայտնում մասնակցելու Եւրոպական հայ ուսանողութեան երրորդ ընդհանուր ժողովին եւ խնդրում են բեռնի ուսանողութեան գնալ իրենց մօտ (Լէմբերդ) հայոց լեզուն սովորեցնելու:

### Լ Ա Յ Պ Յ Ց Ի Գ

Հայպցիդի հայ ձեմարանական ընկերութիւնն որն բաղկացած է 9ը ուսանողներից, անցեալ (98/99թ.) ձմեռային սեմեստրում ունեցել է 12 դասախոս:

1. “Վրաց եկեղեցւց բաժանումը հայոցից իւր նախորդ եւ յետնորդ հանգամանքներով”;

2. “Գեղարուեստի էութիւնն ու նպատակը”;

3. Մի գերմանացու դասախոսութիւն:

4. “Գերմանական թատրերգութեան մասին, — կարդացել է գերմանացի:

5. “Զինական բանաստեղծութիւն եւ կոնֆուսիոն, — կարդացել է գերմանացի:

6. “Հայոց լեզուի ուսումնասիրութիւնը Եւրոպայում ըստ համեմատական լեզուագիտութեան”;

7. “Տեսական աշխարհայեցողութիւն առանց փորձնականութեան”;

8. “Քարածիսային հանքերը գերմանեայում, — կարդացել է գերմանացի:

9. “Հայի այժմեան կեանքի ներքին եւ արտաքին հանգամանքները եւ հայ ուսանողութիւնը”;

10. “Քաղաքատնտեսութեան հիմնական սկզբունքները”;

11. “Բոյսի եւ մարդու յարաբերութիւն հայ բանաստեղծութիւն մէջ”;

12. “Դրեզդենի ժողովրդական դպրոցների աշխատութիւնների ցուցահանդեսը եւ մի ընդհանուր ակնարկ եւրոպական մեծ ազգերի արուեստագիտական յառաջադիմութեան վրայ”;

### Մ Ի Ւ Խ Է Կ Ն

Միւնխենի հայ ուսանողութիւնը որը բաղկացած է 8 հոգուց մինչեւ այժմա կազմակերպուած խումբ չէ ունեցել եւ դասախոսութիւններ չէ կարդացուել:

Յսու կայ որ միւս սեմեստր ուսանողական ժողովներ տեղի ունենան:

### Ց Ի Ւ Բ Ի Խ

Ցիւրիխի ուսանողութիւն՝ որն բաղկացած է 9 հոգուց (երկուսը ն քեկներ), կազմակերպուած խումբ չունի, բայց եւ այնպէս անցեալ ձմեռային սեմեստրում կարդացուել են դասախոսութիւններ ա. Պին. Ա. “Սաղմի զարգացման սկզբանական շրջանների մասին, իսկ ամառուայ սեմեստրում Պին. Ա. “Արհեստը հայոց մէջ”;

### Վ Ի Շ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԿՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### I. Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

1. Բ Ե Ռ Լ Ի Խ :

Բ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Ուրան սեմեստ ր և լու
1	Կերսեսեան դպր.	Փիլիսոփայութիւն	Վան	VI
2	Ուշական եւ համալսար.	Բժշկութիւն	Շուշի (գիւղեց)	XII
	Dr. philos.			
3	Ուշալական	Բնագիտութիւն	Բաղու	VI
4	Ուշալական եւ ինժիներական ինիստուտ	Մեքենայագիտութիւն	Շուշի	I
5	Գիմնազեայի VII. դաս.	Հասարակ. գիտ.	”	V
6	Առեւտրական դպր.	”	Առոտուով	I
7	Գիմնազեայի VII. դաս.	Փիլիսոփայութիւն	Շուշի	IV
8	”	Քիմիա	”	V
9	Լազարեան ճեմ. VI. դ.	Փիլիսոփայութիւն	Կախիջեւան	III
10	Թեմական դպրոցից	Քիմիա	Շուշի	III
11	Ուշալականի V. դաս.	Հասարակ. գիտ.	”	I
12	Գիմնազեայի VIII. դաս.	Հասարակ. գիտ.	Աստրախան	III
13	Ճեմարանից	Երաժշտութիւն	Կուտինա	V
14	Գիմնազեա եւ բժիշկ	Բժշկութիւն	Տիմիս	I
15	Քոլէճ (Փր. գիմ.)	”	”	XI
16	Ուշալական դպր.	Քիմիա	Շուշի	
17	”	Գիւղատեսութ.	Գ. ե օ կ ա յ ի գ ա ւ .	IV
18	” VI. դ.	Բժշկութիւն	Վրիմ	II
19	” դպր.	Քիմիա	Շուշի	VII
20	”	Հանքային գործարանագիտ.	Մեղրի	V
21	”	(Հüttenkunde)		
22	Գիմնասեա	Բժշկութիւն	Հաղորդութ-	II
23	Պերպերեան դպր. (Պոլ-	Մեքենայագիտ.	Տիմիս	
	սույ)	Հասարակ. գիտ.	Սամասն	
24	Ուշալական	” ”	Շուշի	
25	Առեւտրական դպր.	Բաղաքանատեսութիւն	Աղուլիս	I
† 26	Ճեմարան	Երաժշտութիւն	Մողոլ	I
		2. Բ Ր Ե Ս Խ Ա Խ :		
1	Ուշալականից	Աստրախանիկ	Վրիմ	VIII

## Տ. ԴԱՐՄԾ ՇԱՀԱԴՐԱՅԻՆ:

Թիվ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում.	Ծննդավայր	Որբան սեմեառ են լու:
1	Ներսեսեան դպր.	Մեքենայագիտ.	Բագու	I
2	" "	"	Ախալցիս	III
3	" "	"	Տփեսիս	II
4	" "	"	Բագու	I
5	" "	"	Դօրի	ԵԵ
6	" "	"	Դօրի	ԴՊԱԵԼ
4. ԴՐԸ ԶԴՐԸ:				
1	Ուշական դպր.	Քիմիա	Շամախի	VIII
2	" "	"	Տրամբեզոն	VIII
5. ԼԱՑՊՑԻԿ:				
1	Ճեմարան	Աստուածաբան.	Մեծ Սալանոր	V
2	Կենդրոնական վարժ.	Մանկավարժութ.	Ախ	I
3	Ճեմարան	Բնագիտութիւն	Ապղարշապատ	II
4	"	Համեմատական	Շուշի	V
5	Ներսեսեան դպր.	Լեզուագիտութ.	Լոռի	I
6	" "	Բնագիտութ.	Վան	VI
7	" "	Հասարակակ. գիտ.	Գեօկէսյ	V
8	Ուշական	Քիմիա	Բագու	VII
9	Գիմնազիա	"	Տփեսիս	I
10	Ուժգա	"	Շամախի	V
11	Ներսեսեան դպր.	Բժշկութիւն	Կարին	V
6. ՀԱԼԱՀ:				
1	Գեորգեան ճեմարան	Աստուածաբան.	Կիլիկիա	I
2	" "	"	Ղաղախ	V
3	" "	Քիմիա	Լոռի	I
7. ՄԻՒԽՆԽԵՆ:				
1	Ուշական դպր.	Մեքենայագիտ.	Շուշի	XII
2	" "	"	Տփեսիս	XIII
3	" "	"	Տփեսիս	III
4	" "	"	Բագու	III
5	" "	"	Շամախի	III
6	" "	"	Դորի	I
7	" "	Գրտկանութիւն	Պոլիս	XII
8	IV. դաս	Նկարչութիւն	Բագու	V

## Տ. ՊՐԱՅԻ ԾՐԸ ԵՐԱԴՐ:

Թիվ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Որբան սեմեառ են լու:
1	Ուշական դպր.	Լեռնային գործ.	Արևային գործ	Սիւնիք
2	" "	"	"	Ղուբա
3	" "	"	"	Զանդաղուր
9. ԵՆԱ:				
1	Ուշական եւ համալ.	Բժշկութիւն	Մելիք	I
II. ՖՐԱՆՍՈՒԱԻ				
1. ՄՐԱԿ ՊԵԼԻ:				
1	Անյայտ է	Բժշկութիւն	Կեսարիա	X
2	" "	"	Թողաքթ	X
3	" "	"	Պոլիս	VI
4	" "	"	Թալաս	VI
5	" "	"	Աստրախան	VI
6	" "	"	Գիլիպպէ	VI
7	" "	Գիւղանատեսութ. (Երկրագործութ.)	Զմիւռնա	III
8	" "	"	Պոլիս	II
9	" "	"	"	II
10	" "	"	Պարս	II
2. ՆԱԽՍԻ:				
1	Անյայտ է	Բժշկութիւն	Շամախի	VII
2	" "	"	Սեբաստիա	IX
3	" "	"	Պոլիս	VII
4	" "	"	Կեսարիա	IX
5	" "	"	Իզմիտ	VII
6	" "	"	Ատարազպր	XI
7	" "	Բժշկութիւն	"	-
8	" "	"	Սեբաստիա	IX
9	" "	Քիմիա	Շուշի	V
3. ՓԱՐԻԶ:				
ուսանողների մասին մանրամասն տեղեկութիւններ չկան, 50 մասին կայ թէ ինչ էին ուսանում 1897/8թ. ցուցակով, իսկ ընդհանուր թիւը կազմում է մօտաւորապէս 130 հոգի				
1. Երկրագործութիւն				
2. Ճարտարապետութիւն				

ուսանողների մասին մանրամասն տեղեկութիւններ չկան, 50 մասին կայ  
թէ ինչ էին ուսանում 1897/8թ. ցուցակով, իսկ ընդհանուր թիւը  
կազմում է մօտաւորապէս 130 հոգի

1. Երկրագործութիւն
2. Ճարտարապետութիւն



## 3. Իրաւագիտութիւն

7. Խսժեներութիւն

18. Բժշկութիւն

8. Գրականութիւն

1. Առեւտրական գործ

5. Նկարչութիւն

1. Կաւային գործ

1. Լեզուագիտութիւն

3. Երաժշտութիւն

## III. Զ հ ի Ց Ա Ր Ի Ա

1. Լ Օ Զ Ա Ն :

Ք	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Ուբան անձնաբ ռն լսել
1	Անյայտ է	Բժշկութիւն	Առաստով Կեսարիա	I
2	" "	"	Առաստով Կեսարիա	II
3	" "	"	Վարագլիսա	IX
4	" "	Գրականութիւն	Իգարի	I
5	" "	"	Երգնկա	VI
6	" "	Խսժեներութիւն	Պալիս	II
2. Ժ Հ Ն Ե Ւ :				
1	Աստանայի միջնակ. գպր.	Իրաւաբանութ.	Աստանա	I
2	Կենդրունակ. վարժ.	Ընկերագիտութ.	Պրուսաս	VI
3	Ճեմարան	Հասարակակ. գիտ.	Թէոդոսիա	VI
4	Սանասար վարժ.	Քիմիա	Տրավիզոն	IV
5	Ազգային վարժ.	Բնագիտութիւն	Պալիս	III
6	Կենդրունակ. վարժ.	"	Ալին	I
7	Սանասարեան վարժ.	Քիմիա	Կարին	VII
8	Ինչալական գպր.	Հասարակակ. գիտ.	Ղարանուբազար	VII
9	" "	Քիմիա	"	I
10	Կերտեսեան գպր.	Հասարակ. եւ բնա-	Ախալքալաք	VII
11	Գիմնազեա	Բժշկութիւն	Նոր Կախիջեւան	I
12	"	"	Պղլար	III
13	"	Հասարակակ. գիտ.	Նոր Կախիջեւան	I
14	"	Բնագիտութիւն	Շուշ	I
15	Աստամնաբայժ.	"	"	
16	Գիմնազեա	Քիմիա	VIII	
17	Շուշ. գպրոց	Բնագիտութիւն	Շուշ	VI
18	Գիմնազեա	Բնական գիտութ.	"	VI

## 3. Ց Հ Ի Ռ Ի Խ :

Ք	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Ուբան անձնաբ ռն լսել
1	Ուչալական գպր.	Քիմիա	Բժշկութիւն	XIV
2	"	"	Շուշ	VII
3	Սանասար վարժ.	Քիմիա	Արարակիր	V
4	"	"	Կարին	I
5	Ուչալական գպր.	Քիմիա	Մատրասա	VI
6	"	"	Գիղիկայ	V
7	Մասկույի Մեքենայա- գիտական գպր.	Գիղիկայ	Գիղիկայ	

Բաց ի վերցիշեալ ցուցակից, ստացուած են աեղեկութիւններ որ  
1 ուսանող իտալեայի Պաւիա քաղաքում սովորում է բժշկութիւն,  
իսկ 4 ուսանող լիեծում (Բելգիա) սովորում են էլեքտրօտեխնիկա.

Մասնագիտութեան բարեկարգութեան մասնակիւն էն.

Մասնագիտութիւն	Գիրմա- նիա	Գրանսիա	Զւիցա- րիա	Ընդա- մենը
Բժշկութիւն	7	32	6	45
Հասարակական գիտ.	18	14	8	40
Բնագիտութիւն	3	—	5	8
Գեղարվեստ	2	10	—	12
Գիւղատեսանեութիւն	1	5	—	6
Քիմիա	10	8	10	28
Մեքենայագիտիւն. եւ Լեսնային	18	—	1	19
Գործ.				
Ընդամեն	59	69	30	158

Ուսանողների ընդհանուր թիւ -

Ուսուաստանից եկած		Տաճկաստանից		
Շուշ	Բագու	Զանազան աեղեկից	Պալիս	Գ. աւ առն.
19	8	43	7	31

<sup>1</sup> Այսպիսի կարգաւորման պատճառը պին է որ միւս քաղաքներից եկած-ները Ցից չեն անցնում:

Այստեղ հաշուած են միայն այն ուսանողները, որոնց ծննդավայրի մասին տեղեկութիւններ կան: Իսկ ընդհանուր, Եւրոպայի հայ ուսանողների թիւ՝ հաշուած եւ գարիզի 50 հոգին, համնում է մասնաւորապէս 230ի:

Եւրոպայի հայ ուսանողական միութեան կանոնադրութիւնը:<sup>1</sup>

### I. Կազմակերպութիւն

Բարսցական եւ մտաւոր հալորդակցութեան մէջ գնել հայ ուսանողական խմբերը եւ ուսանողները, սոցա՝ իրար հետ անձնական ծառօթութիւններ անելուն նպաստել եւ ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ:

### II. Կազմակերպութիւն

1. Համագումար տարեկան մի անդամ.
2. Կարգադիր մասնաժողով մի համագումարից մինչեւ միւսը.
3. Պարբերական շրջաբերականներ (տես պլակ. VI).

### III. Անդամակցութիւն

1. Միութեան անդամակցելու իրաւոնք ունին Եւրոպայի բոլոր հայ ուսանողութիւնները եւ ուսանողները, անկախ նոցա մասնակցութիւնից տեղական խմբերում:

Դաստիարակութիւնը կը համարուին նրա՝ որոնց անունները գտնուում են կիսամետի ուսանողական մատեաններում, կամ որոնք իրանց ընդհանած ուսումը շարունակել են ուղում առաջնակայ կիսամետի ուսումը:

2. Ամէն գործն անդամ ընտրող է եւ ընտրելի:

3. Գործն անդամները պարտաւոր են միութեան ծախսերը հոգալու համար իւրաքանչիւր կիսամետակում հատուցանել որոշ տուրք, որը լինելու է առնուազը մի փրանկ կամ 80 պֆէնիդ:

4. Գործն անդամը իւր ուսանողական շրջանն աւարտելուց կամ ընդհատելուց յետոյ եւս կարող է շարունակել իւր անդամակցութիւնը եւ մասնակցել համագումարին առանց ձայնատուութեան իրաւոնքի:

5. Բոլոր անդամները իրաւոնք ունին դասախոսութիւն կարգալու կամ ուղարկելու համագումարին, եթէ ներկայ լինելու հնար չունին:

### IV. Ընդհանուր ժողով համագումար

1. Համագումարի տեղը, ժամանակը եւ տեւողութիւնը որոշում է կարգադիր մասնաժողովը խորհրդակցելով ուսանողական խմբերի եւ ուսանողների հետ:

<sup>1</sup> Կանոնադրութիւնը իւր ներկայ ձեւը ստացել է 1899 մարտին Հայութերքում կայացած II ընդհանուր ժողովում:

2. Ամէն մի ուսանողական խումբ, որը մասնակցում է միութեանը, իրաւոնք ունի համագումարին ներկայացուցիչներ ուղարկել:

Դաստիարակութիւնը կարգադրութեան միութեան վերաբերեալ ունի է առթիւ քուէարկութեան արդիւնքը եւ ունի միայն մի ձայն:

3. Համագումարը բաց է անում կարգ, մասն, նախագահը որը եւ առաջարկում է համագումարին համար նախագահ ընտրել:

4. Համագումարի պաշտօնական անձերը կազմում են մի նախագահ ամէն մի նիստի համար եւ երեք քարտուղարներ համագումարի բոլոր նիստերի համար — որոնք ընտրուում են բաց քուէարկութեամբ:

5. Ընդհանուր ժողովի վերաբերեալ ընդհանուր տեղի են ունենում այն ծրագրով եւ օրակարգով որը նախապէս կազմել է կարգադիր յանձնաժողովը:

Դաստիարակութիւնը կարգութեան միութեան բարակահւում է իրաւոնք, անհրաժեշտ գէպում, օրակարգը փոփոխութեան ենթարկել. իսկ ժրազրից գուրք առաջարկած հարցերը կարող են ժողովի վրայման նիւթ դառնալ բոլոր հերթական հարցերից յետոյ ժողովի միաձայն ցանկութեամբ:

6. Համագումարի նիստերի վերաբերեալ ժանձնաժողովի տուած համարատւութիւնը, միութեան վերաբերեալ ընդհանուր խնդիրներ, դասախոսութիւններ եւ ուրիշ տեղեկութիւններ:

7. Դասախոսութեան նիւթ կարող են լինել միայն այն նիւթերը, որոնք որ եւ է առնչութիւն ունին հայկական կեանքի հետ:

8. Համագումարի նիստերը միայն այն ժամանակ կանոնաւոր են, երբ նորան մասնակցում են ընդհանուր ժողովին եկած անդամների մեծամասնութիւնը:

9. Համագումարի վճիռները գործնական կարեւոր ձեռնարկների վերաբերեալ լիազօր են այն գէպում, երբ գոքա համագումարից յետոյ կարգադիր յանձնաժողովի ձեռքով միութեան բոլոր անդամների քուէին ենթարկուելով, կստանան տուած ձայների մեծամասնութիւնը:

Այս ձեռնարկները վերջնականապէս վճռուում եւ ի կատար են ածւում կամ համագումարի եւ կամ կարգ, յանձնաժողովի միջոցաւ՝ համաձայն առաջնի յանձնարարութեան:

10. Համագումարի վճիռները միայն այն գէպում են լիազօր, երբ ընդհանուր են ներկայ անդամների բացարձակ մեծամասնութեամբ:

Դաստիարակութիւնը կարգութեան մեծամասնութեամբ (եթէ մերժող ձայները մեծամասնութիւն չեն):

11. Համագումարի վճիռն նիստում որոշուում է այն քաղաքը, որի ուսանողները իւրանց միջից կարգադիր մասնաժողովը պիտի ընտրեն հետեւեալ համագումարի համար որին եւ յանձնաւում են վարչութեան պաշտօնական թղթերը:

V. Կարեւութեւ յանցնաժողով՝

1. Համագումարից որոշուած ուսանողութիւնը ընտրում է իւր միջից կարգադիր յանձնաժողովը:
2. Կարգադիր յանձնաժողովը բաղկանում է մի նախագահից, մի քարտուղարից եւ առնուալն երկու անդամներից:
3. Կարգադիր յանձնաժողովը ուսանողներից տեղեկութիւններ է ստանում որ տպագրում է իւր շրջաբերականներում, ուր եւ տպագրուում է ընդհանուր ժողովից մի ամիս առաջ համագումարի վերջնական ծրագիրը:
4. Կարգադիր յանձնաժողովը պաշտօնական թղթերը յանձնում է համագումարի վարչութեանը:

VI. Պարբերական շրջաբերութեանեւ՝

1. Միութեան մէջ մտնող ուսանողական խմբերը եւ ուսանողները իրար հետ յարատեւ յարաբերութիւններ են պահպանում: Հասցնելով իրանց մասին տեղեկութիւններ կարգադիր յանձնաժողովին, որը պարբերական շրջաբերականներով այդ տեղեկութիւնները տարածում է միութեան բոլոր անդամների մէջ:
2. Շրջաբերականները պարունակում են ա) տեղեկութիւններ ուսանողական ընկերութիւնների մասին, բ) վիճակագրական տեղեկութիւններ ուսանողների մասին, գ) տեղեկութիւններ ընդհանուր ժողովի մասին եւ դ) յանձնաժողովի ազդերը դէպի ի ուսանողները:

VII. Կանոնադրութեան

1. Կանոնադրութեան փոփոխման վերաբերեալ առաջարկները մի ամիս առաջ յայտնուելու են կարգ: յանձնաժողովին եւ սա շրջաբերականների միջոցաւ բերելու է ի գիտութիւն միութեան անդամներին:
2. Այդ առաջարկները ենթարկուում են միութեան բոլոր անդամների նախարարէին եւ հաստատուում են ձայների  $\frac{3}{4}$  մեծամասնութեամբ:





